ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 դեկտեմբերի 2021թ.

2021 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության բնության պահպանության մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Արգամ Շառյանը, Ավետիք Ասոյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 32 բնակարանը Նարինե Արարատի Մարգարյանին օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին»,*

2. *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի N 20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,*

3. *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,*

4. *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 33 բնակարանը Աշխեն Վաղարշակի Միսիթարյանին անհատույց օտարելու մասին»*

համայնքի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին՝ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 32 բնակարանը Նարինե Արարատի Մարգարյանին*

օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին» հարցի կապակցությամբ Միշա Եղիազարյանը տեղեկացրեց, Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 3 հանրակացարան 7 բնակարանի բնակիչ Նարինե Արարատի Մարգարյանի 2021 թվականի հուլիսի 30-ի դիմումը, որում ասվում է, որ նա չունի սեփական բնակարան և իր 5 երեխաների հետ ժամանակավորապես բնակվում է 3 հանրակացարան 7 բնակարանում: Որդին պարտադիր ժամկետային զինվորական ծառայող է: Ն. Մարգարյանը չի աշխատում, հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: Հանձնաժողովը համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն որպես բնակտարածք օգտագործելու նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 32 բնակարանը մինչև ՎԴ/4918/05/20 վարչական գործով վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը անվարձահատույց օգտագործման տրամադրել Նարինե Արարատի Մարգարյանին:

Որոշվեց՝

Համանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 32 բնակարանը Նարինե Արարատի Մարգարյանին օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի N 20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»* հարցի շուրջ Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 26 բնակարանի (ներկայիս՝ 49 շենքի 39 բն.) բնակիչ Եղիա Մարտիրոսի Վարդանյանի 2021 թվականի նոյեմբերի 22-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի «Համայնքային սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N 39 բնակարանն անհատույց Հերիքնազ Երեմյանի ընտանիքին օտարելու մասին» N 20-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ ընդհանուր բաժնային

սեփականատերեր ճանաչելով Եղիա Մարտիրոսի Վարդանյանին, Հերիքնազ Արամայիսի Երեմյանին և բնակարանի ընդհանուր մակերեսը փոփոխել 13.62քմ:

Եղիա Մարտիրոսի Վարդանյանի որդին՝ Մանուկ Եղիայի Վարդանյանը ծանր հիվանդությունից մահացել է 2018 թվականի հոկտեմբերի 22-ին (մահվան վկայական՝ ԲԱ044051 տրված՝ 30.10.2018թ.): Բյուրեղավան համայնքի ավագանին 2014 թվականի մարտի 11-ին որոշում է կայացրել Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N 39 բնակարանն անհատույց Հերիքնազ Արամայիսի Երեմյանի երեք անձից բաղկացած ընտանիքին օտարելու մասին: Սոցիալական ծանր վիճակում գտնվելով՝ նրանք չեն կարողացել բնակարանը սեփականաշնորհել: Համայնքի ավագանու որոշման հիման վրա նրանք ցանկանում են սեփականաշնորհել բնակարանը և ընդհանուր բաժնային սեփականատերեր ճանաչել Եղիա Մարտիրոսի Վարդանյանին և Հերիքնազ Արամայիսի Երեմյանին:

Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման և Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 2-րդ փողոցի 49 շենքի 39 բնակարանի սեփականության վկայականի մեջ առկա է մակերեսի չափի անհամապատասխանություն՝ բնակարանի 13.58 քմ ընդհանուր մակերեսը պետք է լինի վկայականում գրանցված չափը՝ 13.62 քմ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Եղիա Մարտիրոսի Վարդանյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի «Համայնքային սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N 39 բնակարանն անհատույց Հերիքնազ Երեմյանի ընտանիքին օտարելու մասին» N 20–Ա որոշման 1-ին կետից հանել «, Մանուկ Եղիայի Վարդանյանին՝ ծնված 1997 թվականի օգոստոսի 5-ին » բառերը, իսկ «13.58 » թիվը փոխարինել «13.62» թվով:

Որոշվեց՝

Հավանություն տալ ««Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի N 20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երրորդ՝ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*

Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարանի 58/58ա (ներկայիս՝ 50 շենքի 44 բն.)

բնակարանի բնակիչ Մարիամ Սենիկի Անտոնյանի 2021 թվականի նոյեմբերի 22-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N 44 և 52 բնակարաններն անհատույց Բախշիկ Գևորգյանի ընտանիքին օտարելու մասին» N 13-Ա որոշման մեջ կատարել անվան փոփոխություն:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 13-Ա որոշումը կայացնելու ժամանակ ներկայացրած անձնագրում Բախշի Սերոբի Գևորգյանի անունը նշված է եղել «Բախշիկ»: Սույն թվականի ապրիլի 29-ին Բախշի Սերոբի Գևորգյանը նոր անձնագիր է ստացել, որտեղ կատարվել է անվան ուղղում և խնդրում է ավագանու որոշման մեջ կատարել անվան ուղղում՝ սեփականաշնորհելու նպատակով:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Մարիամ Սենիկի Անտոնյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N 44 և 52 բնակարաններն անհատույց Բախշիկ Գևորգյանի ընտանիքին օտարելու մասին» N 13–Ա որոշման վերնագրում, նախաբանում և բովանդակության մեջ «Բախշիկ» բառերը փոխարինել «Բախշի» բառերով:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վերջին՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 33 բնակարանը Աշխեն Վաղարշակի Մխիթարյանին անհատույց օտարելու մասին»*** որոշման վերաբերյալ Եղիազարյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 37 սենյակի՝ (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 35 բնակարան) բնակիչ Աշխեն Վաղարշակի Մխիթարյանի 2021 թվականի դեկտեմբերի

07-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 33 բնակարանները Աշխեն Վաղարշակի Մխիթարյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից տրված Տեղեկանքով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 37 սենյակը հատկացվել է Աշխեն Վաղարշակի Մխիթարյանի ընտանիքին:

Նա հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Աշխեն Վաղարշակի Մխիթարյանի դիմումը ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 23.53 քմ ընդհանուր մակերեսով 33 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Աշխեն Վաղարշակի Մխիթարյանին՝ ծնված 1957 թվականի մայիսի 02-ին, և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում Աշխեն Վաղարշակի Մխիթարյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 33 բնակարանը Աշխեն Վաղարշակի Մխիթարյանին անհատույց օտարելու մասին»*

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հայկ Վարդևանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Ավետիք Ասոյան